Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (13 դ/ժ), տեխնոլոգիայի՝ տղաների խումբ (4 դ/ժ), տեխնոլոգիա՝ աղջիկների խումբ (4 դ/ժ) երաժշտության (2 դ/ժ), կերպարվեստի (2 դ/ժ) և դասվար (17 դ/ժ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցիչների պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023 թվականի օգոստոսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2023թ-ի օգոստոսի 29-ին՝ ժամը 14:00-ին Արմավիրի մարզի «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Արմավիրի մարզ, «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, 3 փ., 22 շ.:
Տեղեկությունների համար զանգահարել՝ **(093)52 22 37** կամ **(093) 07 16 30** հեռախոսահամարներով: